

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենադարան-ընթերցարաններ. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլզաս-Լոթարինգիայի հարցը. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՊՈՐՏՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆրանսիական ցուցահանդէսը Մոսկովայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐԾԱՐԱՆՆԵՐ

Արդէն ապացուցուած մի իրողութիւն է, որ ժողովրդական կրթութեան գործին աւելի և աւելի նպաստում է մատենադարան-ընթերցարանն իր տուած կրթական բազմակողմանի ազդեցութեամբ: Ժողովուրդը կամ համայնքը, որը հարուստ է իր մատենադարան-ընթերցարաններով, աւելի առաջադիմական քայլեր է անում կրթական գործում, քան թէ այն ժողովուրդը, որին պակասում են թէ մանկական ընթերցանութեան և թէ հասակաւոր մարդկանց համար ժողովրդական էփանակաւոր մատենադարան-ընթերցարաններ: Ուսումնարանն և մատենադարան-ընթերցարանն՝ ահա կրթական գործի երկու վսեմ անսպասելի աղբիւրներ, որոնցից մէկն առանց միւսի՝ այնքան էլ նշանակութիւն չունի: Տուէք ժողովրդին ուսումնարան՝ նա չէ առանց մատենադարան-ընթերցարանի: Նա չէ կարող մի լիակատար կրթութիւն ձեռք բերել ուսումնարանից, նրա ստացած կրթութիւնը կը լինի թերի և միակողմանի, այդպէս էլ կը լինի՝ եթէ ժողովրդին տաք միայն մատենադարան-ընթերցարան, առանց ուսումնարանի: Ուսումնարանը գործարան է միակողմանի և թերի կրթութեան, իսկ մատենադարան-ընթերցարանը միակողմանի և թերի կրթութիւնը բազմակողմանի կրթութեան վերածող մի գործարան է:

Մի որ և է ժողովրդի մատաղ սերունդին ուսումնարանները տալիս են միշտ սահմանափակ կրթութիւն, իսկ մատենադարան-ընթերցարաններն այդ սպաշտօնը կատարում են աւելի լայն պրոցրամով, բազմակողմանի կերպով և լրացնում են ուսումնարաններին, կարելի է ասել, թերի կրթութիւնը. ուսումնարաններում մատաղ սերունդը ստանում է իր սկզբնական կրթութիւնը կամ, ինչպէս ասում են, իր կրթութեան հիմքը,

իսկ մատենադարան-ընթերցարանները մանուկ սերունդին, հետևապէս և՛ ժողովրդին, հասցնում են մտաւոր կատարելագործութեան՝ բարձրացնելով ուսումնարաններում ստացած սկզբնական կրթութեան հիմքը վրա մի նոր շէնք՝ բազմակողմանի կրթութիւն, իր բազմակողմանի և բարձր իղէպական դադարներով:

Նոր սերունդը իր կրթութեան կատարելագործութիւնը ստանում է մատենադարան-ընթերցարաններից, ուրեմն երևում է, որ կրթութեան գործի բարձր հաստատութիւններից մէկն է մատենադարան-ընթերցարանը: Բացի նրանից, որ նոր սերունդի ստացած կրթութեան կատարելագործութիւնը կախած է այդ հաստատութիւնից, նա ունի և մի այլ առաւելութիւն, որից զուրկ են սովորաբար ուսումնարանները: Այդ առաւելութիւնը նրանում է կայանում, որ մատաղ սերունդը, յաճախելով մատենադարան-ընթերցարանները՝ դուրս է գալիս իր ուսումնարանական նեղ միջոցաւորից և մտնելով արտաքին աշխարհի շրջանի մէջ, չվիւժւում է նոր երևոյթներին, նոր դարձումներին և մտքերի փոխանակութիւնից ըստ ստանուած է մեծամեծ օգուտներ:

Մատենադարան-ընթերցարանները իւրաքանչիւր անհատի թէ հասակաւորի և թէ փոքրահասակի համար ծառայում են իբրև հին—անցեալ ժամանակների մտքերի, հասկացողութիւնների, գաղափարների և հանգամանքների՝ ներկայի հետ ունեցած համեմատութեան և փոխանակութեան գործարաններ:

Մատենադարան-ընթերցարանների անհրաժեշտութեան և նրանց տուած օգուտների մասին երկարօրէն գրել աւելորդ է կը լինէր մեր կողմից, որովհետև դեռ նոր—անցեալ ժամանակներում քանիցս գրուեց այդ մասին պատական «Մշակ» լրագրում:

Այդ խնդրով հետաքրքրվող և զբաղվող պարոն յողուածագիրը փափաքում էր ի միջի այլոց, որ Ռուսաստանի հայերը, որքան կարող են, հոգ տանեն մատենադարան-ընթերցարաններ բանալու համար... Համակրելով պարոն յողուածագրի յայտնած փափակներն յօգուտ ուսումնային, մեր կողմից կաւելացնենք. եթէ ուսումնայինը, որոնք կրթական և գրականական գործում առաւել առաջ են գնացել և գնում էլ են հետզհետէ, քան թէ պարսկահայերը, այդ խնդրով են զբաղվում, ուրեմն ճիշդն այն է խնդրին անհրաժեշտ համարել պարսկահայերի համար, տեսնելով որ

այդ վերջինները, համեմատելով իրանց միւս եղբայրների հետ, դեռ նոր են ուղում ոտք դնել այն շաղկ մէջ, որը պիտի պարսկահայերին տանի, հասցնի և հաւասար կանգնեցնի իրանց միւս եղբայրների հետ: Եթէ կուտուրապէս առաջ գնացած ուսումնայինը, ունենալով հարկաւոր մատենադարան-ընթերցարաններ, դարձեալ կամենում են դրանց թիւն օրից օր աւելացնել, բազմապատկել և այդպիսով ուսումնային մատաղ սերունդին տալ աւելի լայն, բազմակողմանի կրթութիւն, ուրեմն ճիշդն այդ բանին պիտի հետևանք լինեն պարսկահայերը, որպէս զի կարողանան իրանց փոքրիկ մանուկներին հասցնել կրթութեան այն աստիճանին, որին հասել են ուսումնային մանուկները...

Մատենադարան-ընթերցարանները նոյնքան անհրաժեշտ են և օգտակար մանուկների համար, որքան և հասակաւորների համար: Թող օրից օր պարսկահայերի մէջ շատանան ուսումնարանները, թող շատանայ և ուսուցիչների թիւն էլ, բայց դարձեալ ուսումնային մատենադարան-ընթերցարաններին նրանք չեն կարող հասնել իրանց նպատակին, չեն կարող տեսնել նոր սերունդին ճշմարիտ կրթութիւն:

ՆԱՍԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 18-ին Վերցնենք կովկասի յետ ընկած աննշան քաղաքներից միւնը, ինչպէս է Շուշին, մտնելը իրական կեանքի մէջ: Այդտեղ կանաչ կարծիք մղում են մի տեսակ պատերազմ հագուստով, աշխատում են իրարից անցնել, կարծես այն եզրակացութեան են եկած, թէ ժամանակի ոգին պահանջում է, որ իրանք մտադրեալ հագուստ ունենան, թանգազին դարդարանք ձեռք բերեն, իրար հետ մրցեն, զգեստի կծու նախանձաւոր լինեն, կարծես թէ ուսումը, լուսաւորութիւնը հէց միայն սրա մէջ է կայանում: Մի կօշկակար, մի մշակ տիպիկ է իր քրտինքով վատաւար կօշկակները շուշուրութեամբ վաճառել իր կնոջը զարդարելու համար, որպէս զի այդ անկիրթ, նախապաշարած արհեստական տիկինը կարողանայ մի կուշտ հպարտաւայ միւսնների առաջ: Խեղճ տղամարդիկ մի տեսակէտից սրանց մշակներ, կամաւոր դիւրներ են. նրանք գործարաններում, կոնտորներում ծառայում են և իսարերը՝ մեղմանների գալլէրէյի դէմոկրէն են:

Յետոյ գալիս է Եփէլեան աշտարակի մօղէլի պանօրաման, որ բացվեց այս ամսի 9-ին: Մօղէլը իսկականից 50 անգամ փոքր է—6 մետր բարձրութիւն ունի: Թէ աշտարակը, թէ շրջապատող ծառերը, լճակները, մարդագետիկները, ոտով, ձիով և կառքերով լքանող հասարակութիւնը, վազվզող շները և այլն հիմնաւոր են շինված: Հետաքրքրել է համեմատել Գիւ-Պասկէի շինած այդ մօղէլը ճարտարապետ Կօշկարովի շինած մօղէլի հետ, որ ներկայացնում է 1889 թիւ Պարիզի ամբողջ ցուցահանդէսը և որը գտնւում է նոյնպէս արտաքին պատերազմի Առաջին անհամեմատ աւելի նուրբ ու գեղեցիկ է: Շինած, թէ և երկրորդն էլ վատ չէ: Եփէլեան աշտարակի կողքին այցելուների թիւն, որոնք, ի դէպ է ասել, հսկայական աշտարակի կողքին միջինների չափ են երևում, գտնւում է և Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնո, շրջապատված զինուորականներով: Աշտարակի տակը խփում են փոքրիկ շատրուաններ: Մի քանի օրից յետոյ, երեկոյններին, շատ հետաքրքրական կը լինի տեսնել այդ մօղէլը, որովհետև այն ժամանակ, ինչպէս երևում է մօղէլի շինութեան մէջ կրկն տուած յայտարարութիւնից, չափաւորները գոյնզգոյն կը լուսաւորվեն, աշտարակի ծայրում կը վառվի պտուղող էլեկտրական լապտերը, վերահան մեղման (подъёмная машина)

րանց աշխատութեան խոշոր մասը իբրև հյուսպատակ վաճառում են այն նպատակի համար, որ իրանց կինը օտարների աչքին հաճոյանայ, ուրիշների հետ մրցի: Այս, ասում ենք օտարների համար, որովհետև մեր կանայք տանը այն չեն, ինչ որ փողոցում, կը նշանակէ նրանք ոչ թէ իրանց անբաժանելի ճորտի համար են հագնվում, այլ հասարակութեան համար: Լաւ կը լինէր, որ մեր կանայք ոչ տանը մուրացկան լինէին, ոչ դրսում թաղուէի քանդակով իրանց ընտանիքը բաղդը, այլ ընտրէին միջին ճանապարհը, պարզ և մաքուր հագնվէին տանը և խնջուկներում, մրցէին իրար հետ կրթութեամբ, ընթերցանութեամբ, բարեգործութեամբ, նախանձաւոր լինէին մտաւոր շնորհների, աշխատէին միմեանցից լաւ դասեր դաստիարակել, ըմբռնէին ժամանակի ոգին, պահանջը, լինէին լաւ գործիչներ. այն ժամանակ կասէինք թէ թշուառ չեն հայեր, եթէ կանայք այդպէս են:

Քիչ չէ տարածված նոյնպէս մի համեմատական, մի մշտական մրցում, որը մերկացնում, թալանում է համեստ ընտանիքները ոչ միայն գաւառներում, այլ և գիւղերում մ. սա հարսանիքի հանդէսներում կատարված շուսիլութիւններն են: Նահապետական, բայց վերին աւտիճանի մարդասիրական շարժում էր գիւղերում «մալի» ասված սովորութիւնը. սա կայանում էր նրանում, որ ամբողջ գիւղը մի օր նուիրում էր իր ուժերը մի վարուցանքի համար անատուն չունեցող աղքատ գիւղացու դաշտերը մշակելու համար: Այստեղ հասարակութիւնը ոտքի էր կանգնեցնում մի ընկածին, տալով նրա ձեռքը զէնք կեանքի և ապրուստի պատերազմի համար: Գլխաւորաբար հիմա էլ կատարվում է սրա նման մի բան, բայց ցաւալին այն է, որ այժմ հասարակութիւնը ոչ թէ պաշտպանում է իր տկար անդամին, այլ կործանում, քանդում, մաշում է նրան նիւթապէս և սա կոչվում է մեր հարսանիքներում բարեկամութիւն, ուրախութիւն, զբէֆ: Հայ երկրասարդը թողնելով իր ծննդավայրը, գնում է օտարութիւն, զրկված կեանքի դուրսնութիւններից, տարիների ընթացքում չարչարվելով, դառն նեղութիւններ կրելով հաղիւ կարողանում է մի չնչին գումար ձեռք բերել և ֆիզիկական թուլացած դառնալ հայրենիք: Միտնելը այժմ պիտի պակաս իրանց որդուն, բայց և պիտի ցոյց տան թէ իրանք էլ մարդ են, պակաս չեն ոչ ոքից և սա ինչով կարելի է, եթէ ոչ աչքեր

կը սկսի բանել, կը վառվեն 150 փոքրիկ էլեկտրական աշտանակները, կը լուսաւորվեն կիօսկները, մի խօսքով այցելուները, 40 կօպէկ վճարելով, կը կարողանան փոքր դիւրով տեսնել այն, ինչ որ տեսնում էին 1889 թիւին Պարիզի ցուցահանդէս եկողները: Եփէլեան աշտարակից մի քիչ հեռու գտնվում է «Բագուի դիօրաման», որ շինել է Պալապոն: Գիօրաման սարքող Ֆրանսիական ընկերութեան ներկայացուցիչը բուն Ֆրանսիական քաղաքավարութեամբ ընդունեց ինձ և, բացատրութիւններ տալուց յետոյ, ընծայեց մի ուսերէն գրքով, որի մէջ տեղեկութիւններ են տրվում Բագուի նախնականութեան մասին և որին կցված է դիօրամայի նկարը. բացի այդ բերեց և ցոյց տուեց Բագուում քաշած բազմաթիւ լուսանկարներ (իրանք են քաշել), որոնց հիման վրա նկարված է շինված է այս դիօրաման: Այդ իսկապէս աւելորդ էր, որովհետև Բագուում եղողները ասում են, որ բոլորովին ճշգրտութեամբ է նկարած դիօրաման: Հասարակութիւնը մուտքի համար վճարում է 40 կօպէկ, իսկ զբոսը կարող է առնել 15 կօպէկով: Գիօրաման ներկայացնում է մի մեծ կիսաշրջան (թաղապրութեան պանօրաման շրջանաձև երևում է նայողի չորս կողմում), որի առաջին մասը շինված է, իսկ շարունակութիւնը նկարված:

Շինված մասում աւագոտ հողի վրա դրված են դանապան գործիչներ և մի բանուոր (խմբա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԻՍԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Քաղաքակրթութեան բոլոր մուկ կողմերը բացատրվում են նրանով, որ նա բարդացնում ու սաստկացնում է գոյութեան կռիւը. բայց լուսաւոր կողմերն այնքան շատ են, որ վերջ ի վերջոյ կը յաղթեն մուկ կողմերին և քաղաքակրթութիւնը կը հասնի այն աստիճանին, որին ամբողջ դարեր սպասում է մարդկութեան ամենալաւ մասը: Առ այժմ քաղաքակրթութիւնը մեղ ցորենի հետ որոնն էլ է տալիս, և այս ցուցահանդէսը սով կարծէք աշխատել են աւելի այդ որոնի հետ ծանօթացնել մեղ, քան ցորենի: Օմօնի թատրոնի մաս երկու փոքրիկ թատրոններ էլ կան, որոնք մեղ մէկում երգում են զանազան խօսքեր, իսկ երկրորդը, որ կոչվում է «Նորութիւններ թատրոն», դեռ պարտաստ չէ և հաւանօրէն զբոսանք նման մի բան կը լինի: Մի քիչ հեռու շինված են «ուսական սարերը»: Լրագրիչների ասելով, զրանց իսկապէս պէտք է անուանել «ամերիկական սարեր»: Ուրեմն ձմեռը սառուցիկ բարձրութիւն (սար) են շինում և փոքրիկ սահնակներ հեծած վերելք ներքե և սղոյում, ոտնե-

շաղկապ մի փարթալ հարսանիքով, որդու բերած փողը դժուար չէ զոհել այս նպատակի համար: Ինչ հոգ թէ այդ կապակցները արեւան քրտինքի գին են, ինչ հոգ թէ միւս օրը սոված կը մնան:

Քանի որ երեակայութեամբ վառված պատկերով հրապուրված է այդ միամիտ հպարտութեամբ, միթէ դժուար է մի հասարակութեան մի գիշերում ունակ լինել, փչացնել և այդպիսով քանդել մի նոր շինվող տան հիմքը և մի քանի ամսից յետ տալով նորից նորապսակի ձեռք պանդխտութեան դառնալուն՝ ուղարկել նրան ուղիղ ճանքի մղում հնուց իր երկրաստոր կնոջից: Չարմախալին այն է, որ մարդիկ այդ հանգամանքի տակ մոռնում են իրական կեանքը, անցնելի մաշող անգույն մէջերը, ապագայի խիստ պահանջները: Նրանք դառնում են առատ, չուայլ, ստանում են միլիոնատերի սիրտ: Տասնեակ տարիներ աղքատ, ժլատ հայր այդ գիշերը դառնում է առատածին, նա մի քանի օրից յետոյ է միայն հասկանում թէ մի գիշերվայ չուայութեան անգույն հոսանքը քնել, տարել է տարիներ ընթացքում արած ցանքը: Հասկանում է, բայց արդէն ուշ է լինում: Չը կամենալով ակնարկ ձգել այն դէպքի վրա, որ հաղարար երիտասարդներ, չունենալով մեծ գումար հարսանիքի հանդիսի համար և չուղենալով ծաղր դառնալ ինքնամիտ հասարակութեան առաջ, սպասում են տասնեակ տարիներ, մինչև որ ձեռք բերեն պահանջված ծախսերը և շատերը այսպիսով փչանում են: Կողմնակիցը ասել թէ ոչ միայն պատկառութեան ժամանակ, այլ ամեն հանգամանքում հարկաւոր է սիրել պարզութիւնը և թօթափել մեր վրայից օրէնք դարձած սովորութեան լուծը, եթէ նա վարակող է, եթէ նա փեսայակար է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԻՆԻ

Բաղձի նահանգական դատարանի նախագահ, շէյխուլիսինի ստատսիկ սովետնիկ Ֆոն-Վենդերլին նշանակված է Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ:

Թէհրանից ստացած մի նամակից թարգմանելով հետևեալը. «Զոհնի 7-ին Թէհրանում կայացաւ մի գրական-թատրոնական երեկոյթ, ի նպատակ ազգային ուսումնարանի: Այդ երեկոյթին եղան դասխոսութիւններ: Դասխոսողներն բոլորէին Բաղձի և Ամուսնական խնդիրը Թէհրանի հայերի մէջ» և Վ. Առաքելեան «Հայոց եկեղեցին և բողոքականութիւնը. հայկական և կաթոլիկոսական խնդիրները»: Նոյն երեկոյթին սիրողները ներկայացրին մի փոքրիկ լուծումը:

Այս օրերս ստացանք Պետերբուրգում տպագրված մի ուսուցիչ քրոնիկ: Դա Ա. Տոմսոնի պատասխանն է պ. Մարրի այն յօդուածին, որ վերջինը գրել է Տոմսոնի «Историческая грамматика

սլովակ) կապած բանում է: Երկուստեք մասն այնպէս անհկատելի կերպով միանում է նկարի հետ, որ կատարեալ լիւրճակ է ստացվում: Թարգմանում է, թէ այդ բոլորը իսկական հոգի շարունակութիւնն է, ընտանի է: Պերսպեկտիվան հիմնաւ է Ձեր առաջ տարածվում է Բալխանին նախ լուսազանքներով հորիզով, շատրուաններով և այլն: Մի տեղ խիստ է նախընտրուած, մի ուրիշ տեղ երևում է հրեհ, շատ ընտանի գոյն ունի գետին լճացած նախը:

Գիտական շինութիւնը արտաքին կողմից շինված է արեւելեան ճաշակով: Նոյն ճաշակով է շինված և կողքի շարքերական կոնցերտը: Կամ արտաքին լաւ է ասել, կաթն-շաւիշ-նախը: Այդ փոքրիկ շինութեան մէջ ասիական քաղաքակրթութիւնն է ներկայանում ձեռք իր զգայական պարերով: Այդ տեղ երգում ու պարում է Բէլ-Բայայի խումբը, որը թաղվացած է մի նեղ ու մի քանի մարդկայացի կանանցից և երկու տղամարդուց, որոնցից մէկը նեղ է: Ոչ մի տեղ թղթակցներին այնպէս պատուով չեն ընդունում, ինչպէս այդտեղ: Առաջին անգամ որ գնացի և խմացան, որ ես թղթակցից եմ, կատարվում է ներքեւում արարական սուրճ ծախողին (մասնաշաղկի գաւաթը 20 կ.) ուղարկել ինձ մօտ՝ խնդրելով որ ես անտրակտին գնամ իրանց մօտ. ես, ի հարկէ, հրաժարվեցի, պատճառաբանելով ֆրանսերէն չը խօսեիս: Հրաւիրողն ասում էր, որ կառավարչուհին ուղում է

современного армянского языка г. Тифлиса» գրքի առիթով:

ՊԻԱՏԻԳՐՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Երգիչ Ամիր-Վանեանց եկել է այստեղ ամսիս 15-ին և մտադիր է մնալ մինչև օգոստոս ամիսը, մի շարք կոնցերտներ տալու նպատակով՝ նախ Պիատի-գրովում, ապա Կիսլովոդսկում և Խաչնուովում»:

Մեզ գրում են ԲԱՐՎԱՆՍԱՐՍԵՑ գիւղից, որ այդտեղի ծխական միդանեան ուսումնարանի հարցաքննութիւնները վերջացան: Անցեալ ուսումնական տարվայ ընթացքում աշակերտներ թիւը 72 էր, որոնցից 4 հոգի տկարութեան պատճառով դուրս են գնացել ուսումնարանից, իսկ 1 աշակերտ վախճանվել է: Այս տարի աւարտեցին իրանց ուսման ընթացքը 14 հոգի:

Մեզ հաղորդում են, որ այս տարի Ղազախ գաւառում հունձը առատ է. ցորեն և դարբնակ են հնձել արդէն: Եղանակը շատ լաւ է: Յունիսի սկզբներին անտառների շրջը չփոթել էր գիւղացին, բայց վերջին օրերի անձրևները ամեն ինչ բարեկիցեցին: Երևում է, որ խաղողն էլ առատ է լինելու:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ եւրոպայի սկզբից մտադրութիւն կայ գիւմարիաներից շատերում արհեստների դաստառութիւնը մտցնել: Ամենից առաջ աշակերտները կը սովորեն կազմարարութիւն և հիւսնութիւն իրանց ընտրութեամբ:

Գաւառական մի քանի փոքրիկ քաղաքներում, ինչպէս մեզ տեղեկացնում են, տեղացի խնամքի գէտ անձանց նախաձեռնութեամբ, կազմվում են փոքրիկ խմբեր, որոնց նպատակն է լինելու է միջնորդ հանդիսանալ, և լոյս տեսնող ժողովրդական գրքերը գնել և տարածել իրանց շրջաններում:

Մեզ հաղորդում են, որ «Թիֆլիսի հրատարակչական ընկերութիւնը» մտադիր է հրատարակել հանգուցեալ երգիծաբան Պարոնեանի գրուածները, միջոց տալով այդպիսով ուսանողներին ծանօթանալու նրա հեղինակութիւնների հետ:

Մեզ տեղեկացնում են, որ հաւանորէն եկող տարվանից Թէհրանում կը հրատարակվի «Շաւիղ» անունով մի շաբաթաթիւթ:

Ապտեմբերից Թիֆլիսի քաղաքային թատրոնում պէտք է տրվեն գրամատիական ներկայացումներ պ. Ֆորկատտիի ղեկավարութեամբ: Խմբի պահպանութեան գործին մասնակցելու է Թիֆլիսի «Արտիստական ընկերութիւնը»:

Ինձ մի ընծայ տալ: Ինչ ընծայ պէտք է տալ, չը գիտեմ: Այնուհետեւ երբ որ գնում էի (մի երկու անգամ ծանօթներս հետ գնացի) իսկոյն գալիս հարցնում էին՝ բերկում պէտք է գրեմ, գրեմ էք: Եւ ի հարկէ, չեմ գնում: Ինչպէս երևում է, արտասահմանում բեկվածին այնպէս խիստ չեն վերաբերվում, ինչպէս այստեղ: «Московская Иллюстрированная газетка» լրագրի թղթակցին այնքան գրաւվել է այդ կանանց պարերով, որ ի պատիւ նրանց ոտանաւոր է գործում: Բէլ-Բայան, իրանց ասելով, Պարիզի աշխարհահայտնու գեղեցկութեան համար պրէմիա է ստացել: Խմբի մէջ կայ մի կին, որ հարեմից է դուրս եկել և խօսում է տաճկերէն (մնացածները միայն արաբերէն ու ֆրանսերէն են խօսում): Մուտքը արժէ 40 կոպէկ: Մի քիչ հեռու գտնվում է սրճարան-բուֆէտ մի պաւլիթում: Զետոյ գալիս է մի անագին շինութիւն, որ երեք մասի է բաժանվում: Մի մասում գտնվում են ապրանքների պահեստը (երկաթուղին ցուցահանդէս ուղարկած ապրանքներն ուղղակի այդտեղ է հասցնում) և մարտատունը (մասնաւորապէս այդ ապրանքների համար): Երկրորդ մասը բռնում է դիւ-հասարակական մեքենաների բաժանունը, որի համար, փառք Աստուծու, առանձին վճար չեն առնում: Այդտեղ է նոյնպէս և երկաթուղու կասան (մի քանի վիճակներ երկաթուղու գծով միացրած են ցուցահանդէսի հետ, այնպէս որ շատ

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԼԶԱՍ-ԼՕԹԱՐԻՆԳԻՍԵԻ ՀԱՐՑԸ

Պարիզի մամուլի մէջ ժամանակ առ ժամանակ երևում են յօդուածներ Ելզաս-Լօթարինգիայի մասին: Մի մի անգամ ֆրանսիացի գրողները, թէ լրագրական յօդուածներում, թէ քրօնիքներում, առաջարկում են զանազան պայմաններ Գերմանիային. մէկն առաջարկում է Գերմանիային վերադարձնել Ելզաս և Լօթարինգիա նահանգները ֆրանսիական հայրենիքին և զրա փոխարէն խոստանում է, որ Ֆրանսիան մի դաշն կը կապէ Գերմանիայի հետ, մի ուրիշ գրող առաջարկում է վերոյիշեալ երկու նահանգները մի չէզոք երկրի կազմել, և այլն:

Այս օրերս ֆրանսիական «Figaro» լրագիրը նոյն խնդրի մասին մի յօդուած հիւրընկալեց իր էջերում: Յօդուածը ստորագրված է «homme d'Etat europeen» (Եւրոպացի պետական մարդ) կեղծ անունով: Այդ յօդուածը զանազանվում է նոյնա-նման յօդուածներից միայն նրանով, որ հեղինակը պահանջում է Գերմանիայից զիջանել միմիայն Լօթարինգիա նահանգը, համարելով այդ երկրը բուն ֆրանսիական երկիր, մի և նոյն ժամանակ իսպառ հրաժարելով Ելզասից, որպէս գերմանական ազգաբնակչութիւն ունեցող նահանգից: Պետական մարդը այդ գնով կամենում է վերականգնել Ֆրանսիայի բարեկամական յարաբերութիւնները դէպի Գերմանիան: Նա հաւատացած է, որ այդ ճանապարհով կարելի կը լինի դաշնակցութիւն կապել երկու հարևան երկրներին մէջ: Յօդուածագիրը իրան շատ տեղեկ է ցոյց տալիս դիւանագիտական հարցերում և հաւատացնում է, որ իր ժամանակին տեսակցութիւն է ունեցել հանգուցեալ ուսու դիւլաւմատ իշխան Գորչակովին՝ հետ, որը Ելզաս-Լօթարինգիայի մասին խօսելու ժամանակ, իր թէ այն միտքն է յայտնել, որ Ռուսաստանի համար այդ երկու նահանգներ խնդիր ոչինչ նշանակութիւն չունի: Բրիտանի «Nord» լրագիրը կասկած է յայտնում, որ յօդուածագիրը որ և է ժամանակ իշխան Գորչակովին հետ խօսակցութիւն ունեցած լինէր, և որ ուսու պետական մարդը այդքան արհամարհանող վերաբերվել դէպի Ելզաս-Լօթարինգիայի հարցը: Բրիտանի լրագիրն ասելով, որ հանգուցեալ Գորչակովին իշխանը չափից դուրս զգոյշ և գաղտնապահ էր, որպէս զի իրան թող տար բացարձակապէս յայտնել իր կարծիքը անյայտ պետական մարդուն...

Թողնեք այդ Սակայն «Figaro» լրագրի յօդուածը, որի նմանները պարբերաբար երևում են Պարիզի մամուլի էջերում, հազիւ թէ Գերմանիայի կողմից իր վրա որ և է ուղարկութիւն գրաւել կարողանայ: Գերմանիան, քանի որ Եւրոպայի խաղաղութիւնն է վայելում և ինքն իր համար ոչ մի կողմից սպառնացող վտանգ չէ տեսնում, հազիւ թէ որ և է կարողութիւն կը տայ վերոյիշեալի նման յօդուածներին: Քանի որ Գերմա-

նիան ուժեղ է, նա կարելի չունի Ֆրանսիայի հետ բարեկամանալու. քանի որ Գերմանիան կը ղեկավարվի իր այժմեան կառավարութեան նման կառավարութեամբ, նա հազիւ թէ կը համաձայնվի որ և է իրաւունք զիջում անել Ֆրանսիային: Այժմեան Գերմանիայի համար ոչինչ նշանակութիւն չունի Ֆրանսիայի հետ դաշնակցութիւնը, քանի որ նա իրան ապահով և զօրեղ է դրում: Այժմեան Գերմանիան կը զիջանէ Ֆրանսիային Ելզաս և Լօթարինգիա նահանգները միայն խոստանալով ոյժի առջև, միայն արիւնա-հեղ պատերազմի մէջ յաղթվելուց յետոյ:

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, 22 յունիսի

Պարիզում կան երկու տեսակ հասարակաց հանրակառուցի, որոնք առաւօտեան ժամը 7-ից մինչև երեկոյան 12 ժամը ակօսում են Ֆրանսիայի մարաքաղաքը, ամեն ուղղութեամբ: Մէկը տրամվայն է (ձիաքաշ երկաթուղի), միւսը օմնիբուսն է (հանրակառուց, որը առանց բէշէն է ման գալիս): Թէ օմնիբուսների և թէ տրամվայների ծառայողները, կոնտրօլօրներից սկսած մինչև վերջին մշակը, մի օր բարկացան տրամվայների ընկերութեան վրա և գործադուլ արին: Ասպէս, մի առաւօտ խեղճ պարիզեցի զարթնում են և սարսափով լսում, որ կառուցիչն էլ չեն չըրջում և որ կամ 2 ֆանկ պիտի ֆիակերի վճարել (ֆիակը ծածկած կառու է մի ձի ըծած) կամ ուսով պիտի ահալին տարածութիւններ անցնել իրանց գործի տեղը գնալու համար: Աւելացրէք որ, ստատիստիկային համաձայն, Պարիզում մի միլիոն ժողովուրդ կառուցիչ է տեղաբնակում, իսկ սրա վրա աւելացրէք և այն, որ այդ օրը երկրիցը պատուվել և հեղեղել էր քաղաքը, — և դուք մի աղօտ պատկեր կը ստանաք այդ օրվայ փողոցների ընդհանուր տեսքի մասին:

Տրոտուարների վրա խլրտում էին անձրեւապահներ անտառներ, որոնց խտութեան միջով անցնելու համար մեծ ջանք էր հարկաւոր: Գլխաւորը ջանք, կրտնները կտկտացնում էին տրոտուարները վրա մեր շփոթեցնող կարանող օրիորդները և ոչինչ չանող կիսա-տիկիները: Աղքատ ուսանողը, մաշված թղթապաշտ ձեռքին, անձրեւապահներից խաղաղված ցլիկները զիւնի, արմունկներով ճղում էր ամբողջ դասախօսութեան համեմու համար: Կայտայտ շապիկ հագած բանուրը շտապում է Մօնրուսից Լաշապէլ հասնել, այսինքն մօտ 10 վերստ ճանապարհ վաղելու օր գտնէ մնացած կէս օրն էլ անքան չը մնալ... Վերջապէս չեղ կոմսուհուց, որը կառու չէ գրտնում Լուվրի մագաղանները գնալու համար, մինչև սպիտակ գոգնոցով խոհարարուհին, որը քթոցը ի մեծ պաշարանիցն է վերադառնում — բոլորը շփոթված են և այնչափ յուսահատված, որ չափ թրջված:

Փողոցի մէջտեղը, բէշները վրա, այստեղ և այնտեղ երկարակնի վիթխարի տրամվայները

բաղմամբ փոքրիկ կիօսկներ, որոնցում զանազան բաներ են ծախում: Լրագիրներ, զովանդող լրագիրներ, կաթ, կոնֆէթներ և այլն: Գնեք բաւական թանգ են, մասամբ կիօսկ վարձողները հարստահարելու հակումների պատճառով, մասամբ էլ նրա համար, որ կիօսկի վարձ մինչև 10 շուք տալիս են 1000—1500 րուբլի: Արտաքին պարտեզի կիօսկներում ամեն բան կրկնապատկէ էման է:

Ցուցահանդէսը մինչև այժմ այցելել են մօտ 150,000 մարդ: Ամեն օր լինում է 2,000—5,000 այցելու: Վերջին օրերս այցելողների թիւը դարձի կերպով շատանում է, անցնելով 5,000-ից և երկի հետզհետեւ կաւեանայ: Մուտքը մինչև 5 օր արժէ 35 կ., իսկ 5-ից յետոյ 70 կոպէ: Ժամի 5-ից առաջ մասնողները կարող են մնալ մինչև վերջը (ժամի 1-ը): Հինգշաբթի օրը մուտքը արժէ 1 ր., ամբողջ օրը:

Ներքին պարտեզում այժմ ցուցահանդէսի մի պաւլիթին վերեցի դիմացի պաւլիթին կտուրը գցած մաւթուլի վրա կէսօրից յետոյ մասն է դալիս յայտնի լարադնաց Ալեքէ Բլոզի, որը անցել է Ֆինլանդիայի Խմաւորա ջրվիթի վրայով:

